Oggetto Panarmenian Forum on Education 2024

Սիրելի հայրենակիցներ,
տեղեկացնում ենք, որ 2024թ. օգոստոսի 5-9-ը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը նախատեսում է կազմակերպել Համահայկական կրթական 11-րդ խորհրդաժողովը: Խորհրդաժողովի նպատակն է քննարկել սփյուռքում հայկական կրթօջախների կրթության առկա հիմնահարցերը, սահմանել նպատակները, հստակեցնել կրթության ոլորտում Հայաստանի և սփյուռքի միջև կապերի ամրապնդման և համագործակցության զարգացմանը, նպատակներին հասնելու հաջորդական քայլերը:
Խորհրդաժողովը գումարվում է, հիմնականում, բաց հրավերի ձևով, և նրան կարող է մասնակցել հայ համայնքներում ազգային կրթության և դաստիարակության խնդիրներով զբաղվող մարմինների, կազմակերպությունների, հաստատությունների մեկական ներկայացուցիչ:
Թեմական և Ուսումնական խորհուրդները, կրթության և դաստիարակության խնդիրներով զբաղվող համահայկական և համայնքային ազմակերպությունները, հաստատությունները, ըստ նպատակահարմարության, կարող են հանդես գալ թվով երկուսից ավելի ներկայացուցիչներով:
Մասնակցելու համար պետք է լրացնել կից ներկայացված հայտը և այն փոխանցել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն մինչև 2024թ. հուլիսի 1-ը: Կից ներկայացնում եմ հայտարարությունը և մասնակցության հայտաձևը:

Gentili connazionali,
Vi comunichiamo che dal 5 al 9 agosto 2024, si svolgerà l'undicesima edizione della Conferenza sull’Istruzione /Panarmenian Forum on Education/ organizzato dal Ministero dell'Istruzione, della Scienza, della Cultura e dello Sport della Repubblica d’Armenia.
Lo scopo della conferenza è discutere di attualità del settore dell'insegnamento della lingua e della cultura armena all'estero, definire gli obiettivi e i prossimi passi per rafforzare e sviluppare la cooperazione con le istituzionali scolastiche operanti all'estero e nella diaspora. Si allega il relativo comunicato con tutte le informazioni dettagliate e il modulo della domanda di partecipazione.

Հարգանքով՝

ՀՀ դեսպանություն

Ambasciata della Repubblica d'Armenia
Lungotevere dei Mellini n. 17
00193 Roma

Tel: (+39) 06 329 66 38
E-mail: info@ambarmenia.it

www.italy.mfa.am
www.mfa.am